

նահիմ», էջ 176) : Այս խաչքարը հաւանաբար կաղմուեցաւ Քուրդի՝ Բաշու-  
նուին յաղթական պատերազմներէն վերադարձին անթիւ :

Քուրդ եւ Սորիշահ իրենց վաղամեծիկ Մամախաթունը դասեր ի յիշա-  
տակ Սաղմոսավանքի գրատունը կը շինեն եւ եկեղեցւոյն ոսկի խաչ, ոսկե-  
կազմ Աւետարան եւ ուրիշ զարդարանքներ կու տան ըստ հոն թողուցած ի-  
րենց արձանագրութեան, ուր կ'ըսուի. «Ի թվին 27 (1255) : Ես Քուրդս եւ  
ամուսին իմ Սորիշահ շինեցաք զգրատունս եւ հաստատեցաք զմատուռ ըս-  
նուն դասեր մերո՞ Մամախաթունին որ տարածամ փոխեցաւ ի Քրիստոս : Եւ  
մէք զարդիւնքն, որ արարիք՝ խաչ ոսկի եւ Աւետարան ոսկետուփ, է (7) նա-  
ւերոս եւ վառ, է (7) զարդք եկեղեցոյ... յայսմ խորանի պատարագել զՔր-  
իստոս յանուն Մամախաթունին» (Յիշատ. 19) :

Վաղամեծիկ Մամախաթունէ զատ Քուրդ եւ Սորիշահ ունեցած են  
նաեւ երեք որդիներ : Ասոնցմէ մին՝ Վաչէ, Սաղմոսավանքի Սիոն եկեղեցու  
մուտքին թողուցած է արձանագրութիւն մը, ուր կ'ըսէ. «...Ես Վաչէ որդի  
Քրդին, որդո՞ Վաչէի եւ Տաւրխուշահի՝ դստեր Մարցպանա Մամիկոնէից  
զնեցի զԵրեւոնս ի մեծ պարոնէն Շահնշահէ եւ ետու ի վանս Սաղմոսի եւ  
զկէսն իմ եղբաւր Հասանա, որ շէն պահէ վանիցս համար. եւ յորժամ եհաս  
ինձ փոխիլ ի կենցաղոյս տարածամ եւ կէս աւուրց...» (Յիշատ. 9) : Վաչէ  
ալ ըստ արձանագրութեան կ'երեւի վաղամեծ եղած է : Սակայն նախ քան իր  
մեծնիրը կտակով կարգադրած է իր հօրենական եւ մօրենական ժառանգու-  
թեամբ զնել կալուածներ Սաղմոսավանքի համար, նոյնիսկ կալուածներէն  
միոյն՝ Երեւոնի՝ կէսը Սաղմոսավանքին եւ միւս կէսը իր եղբօր Հասանի  
կտակած է, որպէսզի «չէն պահէ վանիցս համար», այսինքն մատակարարէ :

Քուրդի եւ Սորիշահի երկրորդ որդին Հասանը եղած է, որմէ հա-  
սած է Յովհաննավանքի արձանագրութիւնը՝ ուր Հասանի բերնէն կ'ըսուի.  
«Ի թուին 218 (1283) կամաւ բարերարին Աստուծոյ ես, Հասան իշխան, որ-  
դի Քրդին իշխանաց իշխանի եւ մաւր Սորիշահի յազգէ Մամիկոնեանց, թոն  
մեծին Վաչէի եւ բարեպաշտ ամուսինն իմ Արուս խաթուն յազգէ Ուքանաց,  
տարածամ եւ կէս աւուրց ելաք յաշխարհէ, աւանդեցաք զհոգիս մեր եւ զս-  
մէն հայրենիս եւ զգաւակս մեր Դաւթի եղբաւր մեր հարազատի եւ աստուա-  
ծասիրի, վասն սիրոյն Աստուծոյ եւ փրկութեան հոգոց մերոց մեր տվաք ի  
սուրբ Կարապետս, ես եւ եղբայր իմ Դաւիթ», եւ կը թուէ կալուածներ որոնք  
կ'ընծայուին վանքին : Նշանակելի է որ Մամախաթունի, Վաչէի նման Հասան  
եւ իր կինը Արուս խաթուն վաղամեծ կ'ըլլան, այսինքն «տարածամ եւ կէս  
աւուրց ելաք յաշխարհէ, աւանդեցաք զհոգիս մեր» : Յաւալի է որ թուական  
չունինք Վաչէի Սաղմոսավանքի (Յիշատ. 9) արձանագրութեան վրայ, զիտ-  
նալու համար թէ ե՞րբ մեռած է Վաչէն : Արդեօք ժանտա՞ խտ թէ պատերազմ  
եղած է անոնց մահուան պատճառը : Եթէ պատերազմի պատճառաւ, այն ա-  
տեն Սուլթան Ալֆի դէմ Թաթարաց արշաւանքին միջոցին, երբ Թաթարները  
իրենց հրամանին ենթակայ Հայ եւ Վրացի ուժերով պարտուեցան : Հոս կը  
յայտնուի որ Սորիշահ ունէր երրորդ որդի մը՝ Դաւիթ :

Նոյն 1283ի արձանագրութեան մէջ կը յիշուի, կալուածներէ զատ,  
Յովհաննավանքին՝ «Ընծայեցաք եւ պահարան զարդարեալ ոսկով եւ արծա-  
թով» (Յիշատ. 22) : Ասիկա հաւանաբար մասնատուի մըն էր :

Տիկին Սորիշահի ստնտուն եղած է Մալիքա, որմէ երկու արձանա-  
գրութիւն ծանօթ է, որոնցմէ առաջինը Յովհաննավանքի կաթողիկէ եկեղեց-  
ւոյն ներսը, կ'ըսէ. «...Ես Մալիքա սնցանող աստուածասէր տիկնոջ Սորին-